




COVID-19-ի դեմ պատվաստանյութեր

ինչ պետք է իմանան խնամատար ընտանիքներում ապրող պատանիները



12 տարեկան և բարձր
ԼԻԱՐԺԵՔ ԴԵՂԱԶԱՓ

COVID-19-Ի ԴԵՄ ՈՐ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹՁ ԿԱՐՈՂ ԵՄ ՍՏԱՆԱԼ

- Եթե դուք 12 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի, դուք կարող եք ստանալ հետևյալ պատվաստանյութերի հիմնական շարքը՝
 - **Pfizer**՝ 2 դեղաչափ՝ 3-8 շաբաթ ընդմիջումով, կամ
 - **Novavax**՝ 2 դեղաչափ՝ 3-8 շաբաթ ընդմիջումով, կամ
 - **Moderna**՝ 2 դեղաչափ՝ 4-8 շաբաթ ընդմիջումով:

Դուք նաև պետք է ստանաք **Pfizer կամ Moderna պատվաստանյութի թարմացված խթանիչ դեղաչափը** ձեր հիմնական շարքի վերջին դեղաչափից կամ խթանիչ դեղաչափից 2 ամիս անց:

- Պատվաստանյութերն **անվճար** են, նույնիսկ եթե չունեք ապահովագրություն:
- Ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին:
- Պատվաստանյութը կարող է տրվել այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ, ինչպես օրինակ՝ գրիպի կամ մարդու պապիլոմավիրուսի (HPV) դեմ պատվաստանյութերի:



ԻՆՉՈՐԻ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ COVID-19-Ի ԴԵՄ

- Բոլոր առաջարկվող դեղաչափերը (ներառյալ խթանիչ դեղաչափերը) ստանալը **ձեզ պաշտպանելու** լավագույն միջոցն է:
- Շատ երիտասարդներ, որոնք վարակվում են COVID-19-ով, ունենում են մեղմ ախտանիշներ կամ ախտանիշներ չեն ունենում: Սակայն ոմանք **խկապես ծանր հիվանդանում են** կամ ունենում են երկարատև առողջական խնդիրներ:
- Նույնիսկ որևէ առողջական խնդիր չունեցող առողջ մարդիկ կարող են հոսպիտալացվել կամ ունենալ երկարատև առողջական խնդիրներ: Որևէ կերպ հնարավոր չէ իմանալ՝ արդյոք դա տեղի կունենա ձեզ հետ: Պատվաստվելը **նվազեցնում է** այս խնդիրների առաջացման **վտանգը ձեզ համար**:




ՈՐՏԵՂ ԿԱՐՈՂ ԵՄ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

COVID-ի դեմ պատվաստանյութերը հասանելի են բազմաթիվ բժիշկների սեկյակներում, կլինիկաներում, դպրոցներում և դեղատներում: Գտեք ձեզ մոտիկ գտնվող պատվաստման վայր՝ այցելելով

ph.lacounty.gov/howtogetvaccinated: Եթե դուք 18 տարեկանից ցածր տարիքի եք, անպայման հարցրեք, թե ինչպես պետք է տրվի ծնողի/խնամակալի համաձայնությունը:

Չանգահարեք Հանրային Առողջության Վարչության Պատվաստումների Չանգերի Կենտրոն **1-833-540-0473** կամ **2-1-1** հեռախոսահամարներով, եթե ձեզ անհրաժեշտ է օգնություն պատվաստանյութ գտնելու, փոխադրման կամ տնային պատվաստում պահանջելու հարցերում:



COUNTY OF LOS ANGELES
Public Health

COVID-19-ի դեմ Պատվաստանյութեր

Ինչ պետք է իմանան խնամատար ընտանիքներում ապրող պատանիները

ՈՐՈՒՔ ԵՆ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

COVID-19-ը կարող է ներառել ցավ, այտուց և կարմրություն ձեռքի այն հատվածում, որտեղ ներարկվել է պատվաստանյութը, սրտխառնոց, հոգնածություն, ջերմություն, դող, գլխացավ կամ մկանային ցավ: Այս կողմնակի ազդեցությունները պետք է անհետանան մի քանի օրվա ընթացքում: Ոչ բոլորի մոտ են լինում կողմնակի ազդեցություններ: Կողմնակի ազդեցությունները բնական են և նշան են, որ ձեր իմունային համակարգը ստեղծում է պաշտպանություն:



ԱՐԴՅՈ՞Ք COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՆ

Այո: COVID-19-ի դեմ պատվաստանյութերը փորձարկվել են, և պարզվել է, որ անվտանգ և արդյունավետ են պատանիների համար: Դրանք շարունակում են եկթարկվել խիստ հսկողությամբ: Մինչ օրս **հարյուր միլիոնավոր մարդիկ** ապահով կերպով պատվաստվել են COVID-19-ի դեմ: Դուք պատվաստանյութից **չեք կարող վարակվել COVID-19-ով:** Պատվաստանյութերից որևէ մեկը չի պարունակում COVID-19-ի հարուցիչ վիրուս:

Լուրջ պերզիկ հակազդեցություն (անաֆիլաքսիա) կարող է առաջանալ ցանկացած պատվաստանյութից հետո, ներառյալ COVID-19-ի դեմ պատվաստանյութը, սակայն դա **հազվադեպ է** տեղի ունենում: Զիչ թվով մարդկանց՝ հատկապես 12-ից 39 տարեկան տղամարդկանց մոտ եղել է սրտամկանի բորբոքում (միոկարդիտ և/կամ պերիկարդիտ) COVID-19-ի դեմ պատվաստումից հետո: Նման վիճակը հազվադեպ է, և դեպքերի մեծամասնությունը ընթանում է մեղմ, և մարդիկ լավ են արձագանքում բուժմանը և հանգստին: Միոկարդիտի կամ սրտի այլ հիվանդությունների վտանգը ձեզ համար շատ ավելի մեծ է, եթե դուք վարակվեք COVID-19-ով: Ավելի ուշ (8 շաբաթում) երկրորդ դեղաչափի ստանալը նույնպես նվազեցնում է միոկարդիտի վտանգը:

Չկա որևէ ապացույց, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութը ազդում է պատանիների զարգացման կամ ձեր վերարտադրողականության վրա:

Ո՞Վ Ե ՈՐՈՇՈՒՄ՝ ԱՐԴՅՈՔ ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

Եթե դուք 18 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի, դուք եք որոշում: Եթե դուք 17 տարեկան եք կամ ավելի փոքր և գտնվում եք խնամատարության ներքո, ձեր խնամատարը (foster care giver), բարեկամ-խնամակալը կամ խմբային բնակավայրի աշխատակիցը կարող է համաձայնություն տալ, եթե դուք համամիտ եք: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Երեխաների Իրավունքների Կենտրոնի ձեր իրավաբանին՝ 323-980-7700 հեռախոսահամարով:

15 տարեկան և ավելի բարձր տարիքի պատանիները (օրինակ՝ դաստարանի որոշմամբ գործունակ ճանաչված՝ Էմանսիպացված, կամ ինքնուրույն գործունակ անչափահաս, ամուսնացած կամ նախկինում ամուսնացած) կարող են տալ իրենց անձնական համաձայնությունը: Հակառակ դեպքում, եթե դուք 18 տարեկանից փոքր եք, համաձայնություն պետք է տա ծնողը կամ օրինական խնամակալը:

Ի՞ՆՉ ԱՆԵԼ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵԹԵ ԵՍ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ, ՍԱԿԱՅՆ ԻՄ ԽՆԱՄԱՏԱՐԸ (FOSTER CARE GIVER) ԴԵՄ Է

Եթե ձեր խնամակալը համաձայն չէ, որ դուք պատվաստվեք, դիմեք ձեր իրավաբանին:

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԲԵՐԵՄ ԻՆՉ ՀԵՏ ՊԱՏՎԱՍՏՎԵԼԻՄ

Պատվաստումների որոշ վայրերում պահանջվում է լուսանկարով անձը հաստատող փաստաթուղթ՝ ID: Եթե չունեք լուսանկարով անձը հաստատող փաստաթուղթ, դիմեք ձեր փաստաբանին: Մեկ այլ տարբերակ է Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության կողմից ղեկավարվող պատվաստման վայր գալը, որտեղ չի պահանջվում լուսանկարով անձը հաստատող փաստաթուղթ:

Խոսեք ձեր բժշկի, ծնողի, խնամակալի կամ այլ վստահելի չափահաս անձի հետ COVID-19-ի դեմ պատվաստման մասին: Ուղղեք նրանց ձեզ հետաքրքրող ցանկացած հարց: